# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

## ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/29 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Սևան 03.06.2020թ.
ժամը 11:00

Հանձնաժողովի նախագահ՝ Դոնարա Լալազարյան

Անդամներ՝ Սարգիս Վարդանյան

Մարիաննա Առաքելյան

Անուշ Մարտիրոսյանի

Գնումները համակարգող՝ Լանա Դավթյան

**<u>ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/29 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին</u>**

(Դ. Լալազարյան)

1. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկված գինը.
3. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/29 ծածկագրով ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**<u>1. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.</u>**

(Դ. Լալազարյան)

1.1 Քանի որ **3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների** համար ներկայացված գնային առաջարկները գերազանցում էին սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գներին, հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 40-րդ կետի 5-րդ ենթակետով որոշում էր կայացրել վերը նշված չափաբաժիններով ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով կասեցնել հանձնաժողովի նիստը և բավարար գնահատված հունիսի 3-ին ժամը 11:00-ին ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում: Բանակցությունների վարման համար սահմանել էր ժամանակ 30 րոպե:

1.2 Բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով ծանուցվել էր գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

1.3 <<Լոռեդո>> ՍՊԸ-ն նոր գնային առաջարկ է ներկայացրել էլեկտրոնային փոստի միջոցով:

Մասնակցի կողմից ներկայացվել են հետևյալ նոր գնային առաջարկը՝

| Հա փա բաժ ին | Գնման ենթական ապրանքի անվանումը | Գնման հայտով սահմանված գինը ՀՀ դրամով | Մասնակիցների անունները | Գնային առաջարկ ՀՀ դրամով | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 5 | Լոգարանի ցնցուղի գլխիկ | 20000 | «Լորեդո» ՍՊԸ | 30000 | 100 | 0 | 30100 |
| 7 | Շպինգալետ եվրո դռան | 7000 | «Լորեդո» ՍՊԸ | 10000 | 100 | 0 | 10100 |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 2. Յուրաքանչյուր մասնակիցների առաջարկված գները.

(Դ. Լալազարյան)

2.1<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հա փա բաժ ին | Գնման ենթական ապրանքի անվանումը | Գնման հայտով սահմանված գինը ՀՀ դրամով | Մասնակիցների անունները | Գնային առաջարկ ՀՀ դրամով | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Հղկասկավառակ | 2500 | «Լորեդո» ՍՊԸ | 2000 | 500 | | 2500 |
| | | | «Էկոմիքս» ՍՊԸ | 2866.66 | 286.67 | 630.67 | 3784 |
| 2 | Սոսինձ | 10000 | «Լորեդո» ՍՊԸ | 8000 | 2000 | | 10000 |
| | | | «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ | 3625 | 250 | 775 | 4650 |
| 3 | Կոնքամանի դյուբել | 2000 | «Լորեդո» ՍՊԸ | 2000 | 500 | | 2500 |
| | | | «Էկոմիքս» ՍՊԸ | 1848.48 | 184.85 | 406.67 | 2440 |
| | | | «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ | 2525 | 250 | 555 | 3330 |
| 4 | Ծորակ 1 տեղանոց | 20000 | «Լորեդո» ՍՊԸ | 40000 | 10000 | | 50000 |
| | | | «Էկոմիքս» ՍՊԸ | 16772.73 | 1677.27 | 3690 | 22140 |
| | | | «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ | 30500 | 250 | 6150 | 36900 |
| 5 | Լոգարանի ցնցուղի գլխիկ | 20000 | «Լորեդո» ՍՊԸ | ***30000*** | ***100*** | ***0*** | ***30100*** |
| 6 | Գայլիկոն | 1500 | «Լորեդո» ՍՊԸ | 1300 | 200 | | 1500 |
| | | | «Էկոմիքս» ՍՊԸ | 1554.55 | 155.45 | 342 | 2052 |
| | | | «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ | 1050 | 250 | 260 | 1560 |
| 7 | Շպինգալետ եվրո դռան | 7000 | «Լորեդո» ՍՊԸ | ***10000*** | ***100*** | ***0*** | ***10100*** |
| 8 | Պտուտակ գլխիկով և | 900 | «Լորեդո» ՍՊԸ | 800 | 100 | | 900 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | գայլրկոսր սայրով | | «Էկոսրքս» ՍՊԸ | 1136.36 | 113.64 | 250 | 1500 |
| | | | «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ | 600 | 250 | 170 | 1020 |
| 9 | Շուռուպ չերեպիցա | 20000 | «Լորեդո» ՍՊԸ | 20000 | 8000 | | 28000 |
| | | | «Էկոմիքս» ՍՊԸ | 18181.82 | 1818.18 | 4000 | 24000 |
| 10 | Պոլիուրետանային փրփուր | 10800 | «Լորեդո» ՍՊԸ | 8000 | 2000 | | 10000 |
| | | | «Էկոմիքս» ՍՊԸ | 8809.09 | 880.91 | 1938 | 11628 |
| | | | «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ | 6687,5 | 250 | 1387,5 | 8325 |

Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են **3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժիններով** գնման հայտով սահմանված գինը, սակայն հանձնաժողովը որոշեց բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին հայտարարել ընտրված մասնակից, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 40-րդ կետի 5-րդ ենթակետի գ պարբերությամբ, քանի որ միևնույն գնման առարկայի բնութագրով տվյալ օրացուցային տարում արդեն իսկ կազմակերպվել էր մեկ գնման մրցակցային ընթացակարգ, որը չկայացած էր հայտարարվել մասնակիցների ներկայացրած գները գնման հայտով սահմանված գինը գերազանցելու հիմքով պայմանավորված:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

**3. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/29 ծածկագրով ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Դ. Լալազարյան)

3.1 Ելնելով վերոգրյալից հանձնաժողովը որոշեց **ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/29** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **ընտրված մասնակից** հայտարարել՝

**<<Էկոմիքս>> ՍՊԸ-ին**-3-րդ, 4-րդ և 9-րդ չափաբաժիններով
**<<Լորեդո>> ՍՊԸ-ին**-1-ին, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժիններով
**«ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ-ին**-2-րդ և 10-րդ չափաբաժիններով
***Հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ***
**<<Լորեդո>> ՍՊԸ-ին**-2-րդ և 10-րդ չափաբաժիններով
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Լալազարյան

Անդամներ՝ Ս. Վարդանյան

Մ. Առաքելյան

Ա. Մարտիրոսյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան